ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2024 թվականի №--Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2024 թվականի հուլիսի 1-ի հայտով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված՝ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0623 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը,

բ) Ներկայացված գրությամբ Ընկերությունը նշել է, որ Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 31-ի №304-Ա որոշման համաձայն՝ ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված՝ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել էր մինչև 2024 թվականի հուլիսի 31-ը, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-ից սկսած՝ Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ադրբեջանական ագրեսիայի և հայ-ադրբեջանական սահմանին ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի հետևանքով ծրագրի տարածքի մոտակայքում ծավալվող իրադարձությունների կրկնվող և անկանխատեսելի բնույթով պայմանավորված՝ կառուցապատողը չի կարողացել ծրագրի տարածքում աշխատանքներ իրականացնել, հիմնական սարքավորումներ և նյութեր տեղափոխել և իրականացնել ծրագրի հետ կապված ցանկացած այլ կարևոր գործողություն նախքան ձմռան սկիզբը, ինչի հետևանքով տեղի

են ունեցել ծրագրի իրականցման զգալի ուշացումներ: Ընկերությունը նշել է նաև, որ Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 31-ի №304-Ա որոշման ընդունման ժամանակ հնարավոր չի եղել հստակ գնահատել ծրագրի տարածքի վրա գրությամբ նշված անկանխատեսելի իրադարձությունների ազդեցության տևողությունը և Ընկերությունը շարունակական բանակցություններ է վարել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ գնահատելու տեղի ունեցած իրադարձությունների ազդեցությունը և սահմանելու կառուցման իրատեսական ժամանակահատված,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության, ««ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«Էֆէսէլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև կնքված՝ Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին երկրորդ լրացուցիչ համաձայնագրին հավանություն տալու մասին» №1866-Ա որոշման համաձայն՝ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի նախատեսված կոմերցիոն շահագործման ամսաթիվ է սահմանվել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը,

դ) 2024 թվականի հուլիսի 2-ին Հանձնաժողով ներկայացված հայտի շրջանակում Ընկերությունը որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, և չի հայցել դրանց՝ ֆորս մաժոր ճանաչումը, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը,

(այսուհետ՝ Կարգ), այդ թվում՝ Կարգի 78-րդ, 81.2-րդ կետերը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով Ընկերության 2024 թվականի հուլիսի 2-ի դիմումը, Հանձնաժողովը **որոշում է**.

1. Երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշմամբ «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, նշված որոշման մեջ՝ «մինչև 2024 թվականի հուլիսի 31-ը» թվերը և բառերը փոխարինելով «մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը» թվերով և բառերով, իսկ «մինչև 2042 թվականի նոյեմբերի 15-ը» թվերը և բառերը՝ «մինչև 2043 թվականի մարտի 18-ը» թվերով և բառերով.
2. Ընկերությանը՝ ԼԷ №0623 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 17-ի №1214 գրությամբ Հանձնաժողով ներկայացված, 2020 թվականի նոյեմբերի 30-ի №1549, 2022 թվականի հունիսի 30-ի №826, 2023 թվականի սեպտեմբերի 29-ի գրություններով գործողության ժամկետը երկարաձգված ԲԲԱ05/2018 երաշխիքի համաձայն երաշխավորված 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 68 750 000 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի հունվարի 15-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 31-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2024թ.